

[Խ-750²](#)-30.09.2020-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱՂՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
ՍԱՀՄԱՆԱՂՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի ընտրական օրենսգիրք (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության» բառերը:

2) 7-րդ մասից հանել «և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության համապետական ընտրական ցուցակում առնվազն առաջին երեք տասնյակ թեկնածուները հաստատվում և առաջադրվում են կուսակցության համագումարի որոշմամբ: Ազգային ժողովի հերթական ընտրություններում համապետական և տարածքային ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև հերթական և արտահերթ ընտրություններում կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը հաստատվում և առաջադրվում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշմամբ (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումներով): Համապետական և տարածքային ընտրական ցուցակների բոլոր էջերը կնքում և ստորագրում է կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) իրավասու անձը»:

Հոդված 3. Օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի որոշումները (դաշինքի անդամ կուսակցությունների համագումարների և մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումները)՝ համապետական և տարածքային ընտրական ցուցակները հաստատելու և առաջադրելու վերաբերյալ. »:

Հոդված 4. Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 7-րդ կետով.

«7) կուսակցության կանոնադրությունը չի համապատասխանում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջներին»:

Հոդված 5. Օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով.

«6) կուսակցության կանոնադրությունը չի համապատասխանում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջներին»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳԻՐՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի ընտրական օրենսգիրք (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի՝

3) 1-ին մասից հանել «, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության» բառերը:

4) 7-րդ մասից հանել «և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության համապետական ընտրական ցուցակում առնվազն առաջին երեք տասնյակ թեկնածուները հաստատվում և առաջադրվում են կուսակցության համագումարի որոշմամբ: Ազգային ժողովի հերթական ընտրություններում համապետական և տարածքային ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև հերթական և արտահերթ ընտրություններում կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը հաստատվում և առաջադրվում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշմամբ (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումներով): Համապետական և տարածքային ընտրական ցուցակների բոլոր էջերը կնքում և ստորագրում է կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) իրավասու անձը»:

Հոդված 3. Օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի որոշումները (դաշինքի անդամ կուսակցությունների համագումարների և մշտապես

գործող ղեկավար մարմինների որոշումները)՝ համապետական և տարածքային
րնտրական ցուցակները հաստատելու և առաջադրելու վերաբերյալ. »:

~~Հոդված 4.~~ Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի ~~6-րդ կետից հանել~~
«կասեցվել կամ» բառերը: լրացնել նոր՝ 7-րդ կետով.

«7) կուսակցության կանոնադրությունը չի համապատասխանում
«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջներին»:

~~Հոդված 3.~~ Օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «կասեցվել
կամ» բառերը:

~~Հոդված 54.~~ Օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի ~~5-րդ կետից հանել~~
«կասեցվել կամ» բառերը: լրացնել նոր՝ 6-րդ կետով.

«6) կուսակցության կանոնադրությունը չի համապատասխանում
«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջներին»:

~~Հոդված 5.~~ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել
«կասեցվել կամ» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: